ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«_____»_____ 2023թ.

_____

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»
ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ Է. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ekhachatryan@peacedialogue.am

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Ի պատասխան 22.06.2023թ. Ձեր հ. 846795 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Նախկին ռազմագերիների իրավական կարգավիճակը ՀՀ-ում» «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից ներկայացված զեկույցը ՊՆ համապատասխան ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվել է:

Զեկույցը համապատասխան փաստաթղթերի, օրենքների, իրավակարգավորումների, կոնվենցիաների ուսումնասիրությունների հիման վրա իրականացված համապարփակ վերլուծություն է, որում ներառված է նաև նախկին ռազմագերիների կարգավիճակի առնչությամբ օտարերկրյա պետությունների փորձը և իրավական դաշտը:

Տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2021 թվականի № հրամանի՝ գերությունից վերադառնալուց հետո զինծառայողները պարտադիր անցնում են առողջական վիճակի հետազոտում, անհրաժեշտության դեպքում բուժում, և եթե ենթադրվում է զինծառայողի պիտանիության աստիճանի փոփոխություն՝ իրականացվում է ռազմաբժշկական փորձաքննություն:

Գերությունից վերադարձած և զինվորական ծառայության համար պիտանի ճանաչված զինծառայողների՝ յուրաքանչյուր դեպքում մարտական հերթապահության ընդգրկելու նպատակահարմարության վերաբերյալ որոշումը կայացվում է վերջիններիս հոգեբանական (հոգեֆիզիոլոգիական) վիճակի գնահատմամբ:

Ինչ վերաբերում է գերությունից վերադարձած զինծառայողների հիվանդությունների կամ վնասվածքների՝ գերության ընթացքում ստանալու կամ ձեռք բերելու պատճառական կապը հաստատելուն, տեղեկացնում ենք, որ մեծ ժամանակահատված անցած լինելու դեպքում այն իրականացնելը գրեթե իրատեսական չէ: Միաժամանակ, զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով կայացվող եզրակացությունների շրջանակներում պարտադիր է ստացած վնասվածքի կամ ձեռք բերած հիվանդության՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի որոշումը՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 405-Ն որոշման պահանջների:

Գերության մեջ գտնված և վերադարձած զինծառայողի համար ամբողջ կյանքի ընթացքում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքի հարցը անհրաժեշտ է քննարկել այլ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ, քանի որ վերջինիս զորացրվելուց հետո նրա բժշկական սպասարկումը ՊՆ տիրույթում չէ և պետք է իրականացվի քաղաքացիական հիվանդանոցներում: Այնուամենայնիվ, կարծում ենք՝ անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունք միայն այն դեպքում պետք է սահմանել, երբ զինծառայողի կողմից գերության մեջ գտնվելու փաստի կապակցությամբ անցկացված ծառայողական քննության արդյունքում հիմնավորվել է, որ գերության մեջ հայտնվելը զինծառայողի՝ զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք չէ, կամ եթե առկա չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի (Հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից) հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթ և հաստատվել է, որ ստացած վնասվածքը (խեղումը) կամ ձեռք բերած հիվանդությունը գերության արդյունք է:

Գերությունից վերադարձած, ինչպես նաև խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու այլ դեպքերում բժշկական փորձաքննությունը Ստամբուլյան արձանագրության դրույթներին համապատասխան իրականացնելու համար ներգրավվող մասնագետների վերապատրաստումների ու դասընթացների անցկացման առաջարկի հետ համակարծիք ենք, որի կազմակերպումը նույնպես նպատակահարմար է (նշվածով նաև կապահովվի պետության պոզիտիվ պարտականությունը) դիտարկել այլ շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ վերլուծության մեջ ներկայացված առաջարկություններն արժեքավոր են, հիմնավորված և ՀՀ-ում օրենսդրական բացերը լրացնելու նպատակով փոփոխությունների իրականացման ընթացքում հաշվի կառնվեն:

X _____

Հարգանքով՝

Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Կատարող՝ Լ. Անտոնյան
Հեռախոս՝ (010) 29-45-19